ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն Զորային հետախուզություն

Թեմա Հայաստանի Հանրապետության հիմնական դպրոցներում նախնական զինվորական պատրաստություն առարկայի բացթողումների ու թերությունների վերացման առաջարկություններ:

Կատարող Միքայել Ավագի Ապրեսյան
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար Մանկ. Գիտ. Թեկ., դոցենտ Հակոբ Թադևոսյան
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

Երևան 2022թ.

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ

Մեր անկանխատեսելի հակառակորդը մեզ պարտադրիված մարտական գործողությունների մեջ է ներքաշել: Ակնհայտ է. բազմահազարամյա պատմություն ունեցող հայ ժողովրդի գլխավերևում կրկին պատերազմի սպառնալիք է կախված, որն էլ ավելի է պարտավորեցնում ունենալ հզոր ու ժամանակակից ռազմական գիտելիքներով օժտված մարտունակ բանակ՝ առավելևս պատշաճ մակարդակի մարտական ոգով օժտված մատաղ սերունդ:

Այսօր շատերն են բարձրաձայնում, որ ՀՀ ուսումնական հաստատություններում նախնական զինվորական պատրաստությունն ու մատաղ սերնդի ռազմահայրենասիրության դաստիարակությունը ցածր մակարդակի վրա է գտնվում, որն անընդունելի է՝ այսօր ՀՀ պետական սահմանները պաշտպանող քաջ մարտիկները ՀՀ ուսումնական հաստատություններում կրթված ու ռազմահայրենասիրական ոգով դաստիարակված քաջ սաներն են...

Ռազմահայրենասիրությունը լոկ խոսքեր չեն, այն չի բարձրաձայնում՝ հայրենիքի վտանգի դեպքում հայրենիքն ինքն է կանչում իր քաջ զավակներին և ահա այդ պահին յուրաքանչյուր հայ քաջորդի պետք է իր վառ օրինակով ոգեկոչի այլոց...

Ակնհայտ է. ցանկացած պետական, մասնավոր, քաղաքական, հասարակական և կրոնական կառույցներում բացթողումներ ու թերություններ կան՝ իհարկե բացթողումներ ու թերություններ կան նաև ՀՀ ուսումնական հաստատություններում, որն էլ հիմք ընդունելով ներկայացնում ենք մեր կողմից մշակված առաջարկությունները՝ վերոգրյալ հավանական թերություններն ու բացթողումները հնարավորին սահմաններում վերացնելու հարցով...

Հաշվի առնելով երկիր մոլորակի՝ առավելևս ՀՀ-ի պետական սահմաններում առկա ռազմաքաղաքական իրավիճակը՝ առաջարկում ենք.

1. Բոլոր գերատեսչություններում, մարզային ու համայնքքային ղեկաար մարմիններում զինվորական պատրաստության ու ռազմահայրենասիրության վերաբերվող հաստիքները վերանայել ու համապատասխանեցնել առկա ժամանակի պահանջներին:

2.Նախնական զինվորական պատրաստվածություն առարկան վերանվանել Զինվորական պատրաստություն:

3.Նախնական զինվորական պատրաստվածություն առարկայի ուսուցչին տալ զինվորական ղեկավարի կարգավիճակ, իսկ պատերազմական իրավիճակներում շնորհել ուսումնական հաստատության փոխտնօրենի լիազորություն:

4.Զինվորական ղեկավարին զինվորական կոչում շնորհելու հարցում վերանայելլ խորհրդային պահեստազորի սպայի երկու անգամյա կոչում շնորհելու կարգավիճակը և կրտսեր սպայական կազմին զինվորական կոչում շնորհել 5 տարին մեկ անգամ, իսկ ավագ սպայական կազմին 7 տարին մեկ անգամ՝ մինչև գնդապետի կոչում:

5.Պաշտպանության նախարարաության համապատասխան բաժիններում մշակել աշակերտ-զինվոր հատուկ ծրագրեր՝ <<Պատրաստ հայրենիքի պաշտպանության>> թեմայով. ուսումնական հաստատություններում սովարաղներին ուսուցանելու համար, որպես լրիացուցիչ ռազմահայրենսիրական թեմա:

6.Պաշտպանության նախարարաության համապատասխան գերատեսչություններում, կենտրոնական և տարածքային զինկոմիսարյատներում բացել հատուկ ռազմահայրենասիրական բաժիններր՝ ուսումնական հաստատութունների հետ համագործակցելու և աջակցել հատուկ ծրագրերի մշակելու հարցում...

-Հայրենիքի պաշտպանությունը բոլորիս սուրբ գործն է.

-Աջակցել սովորաղներին պաշտպանության նախարարության զորամասեր այցելելու և զինվորների առօրյա կյանքին ծանոթանալու հարցում:

-Տարածքային զինկոմիսարյատում ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ բացազատել ռազմական տեխնիկաներ և հրետանային միջոցներ՝ սովորողներին ցուցադրելու նպատակով;

-Ուսումնամեթոդական ձեռնարկներ և ուսուցողական պաստառներ մշակելու և նրանց տպագրությունը կազմակերպելու համար:

-Ռազմահայրենասիրական դաստիարակության տեսաֆիլմերի ծրագրեր մշակել ու տեսաֆիլմեր նկարահանել՝ ուսումնական հաստատություններում ցուցադրելու համար:

-Ուսումնական հաստատություններին աջակցել նյութատեխնիկական բազա ձեռք բերելու հարցում:

-Հավանական լայնամաշտաբ մարտական գործողությունների դեպքում ուսումնական հաստատություններին աջակցելու համար:

ԶԻՆՎՈՐԱԿԱԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ

ՆՇԱՆԱԿՈՒՄԸ և ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Ուսումնական հաստատություններում զինվորական պատրաստության և մատաղ սերնդի ռազմահայրենասիրության դաստիարակության գործընթացի բացթողումները ու թերությունների վերացնելու համար առաջարկում ենք՝

1.Զինվորական ղեկավարի ընտրության հարցում հիմք ընդունել սպայի ծառայողական բնութագիրը:

2.Զինվորական պատրաստության ուսուցչին տալ զինվորակն պատրաստության ղեկավարի կարգավիճակ:

3.Ուսումնական հաստատությունում զինվորական պատրաստության ղեկավար նշանակել այն սպային, ով ծառայել է ՀՀ ազգային բանակում, ՀՀ ազգային անվտանգության զորքերում և ՀՀ ներքին զորքերում՝

-20 տարի և անցել պահեստազոր.

-5 տարուց ոչ պակաս և ՀՀ պետական սահմանները պաշտպանելիս վիրավորվել է ու ստացել զինհաշմանդամի կարգավիճակ (եթե առողջական և բարոյահոգեբանական կարգավիճակը ներում է):

-5 տարուց ոչ պակաս և ծառայողական պարտականությունները կատարելիս վիրավորվել ու ստացել է զինհաշմանդամի կարգավիճակ (եթե առողջական և բարոյահոգեբանական կարգավիճակը ներում է):

-2 տարուց ոչ պակաս զբաղեցրել է վաշտի հրամանատարի հաստիք կամ վաշտի հրամանատարի համահավասար հաստիք ու առաջխաղացում է ունեցել:

-ունի բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն, (անկախ մասնագիտությունից):

-զինվորական ղեկավար նշանակելիս սպայի համար անպատվաբեր է որևիցե մրցույթի մասնակցելը, նպատակահարմար է առավելությունը տալ առավել վաստակաշատ սպային:

-Զինվորական ղեկավար նշանակել միայն տարածքային զինվորական կոմիսարի երաշխավորությամբ:

4.Զինվորական ղեկավարին թույլատրել մատաղ սերնդին ծառայել մինչև 70 տարին լրանալը՝ եթե առողջական վիճակը թույլ է տալիս: Ուսումնական

հաստատության զինվորական ղեկավարին ծառայությունից ազատել միայն տարածքային զինվորական կոմիսարի իմացությամբ:

5.Ուսումնական հաստատություններում աննպատակահարմար է զինվորական պատրաստություն առարկան ընդգրկել աշխատանքի ուսուցում, երգ, պար նկարչություն, գծագրություն և նմանատիպ այլ առարկաների մեթոդմիավորումներում, նպատակահարմար է ընդգրկել պատմա-աշխարհագրական մեթոդմիավորումներում:

ՍՊԱՅԻ ՊԱՏԻՎԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ուսումնական հաստատությունում սպայի պատիվը բարձր մակարդակի պահելու համար առաջարկում ենք՝

1.Զինվորական պատրաստության ղեկավարը պարտավոր է՝

- Ուսումնական հաստատություն հաճախել և ողջ դասապրոցեսի ընթացքում կրել եղանակային պայմաններին համապատասխան զինվորական համազգեստ. որևիցե այլ պատճառաբանություն չընդունելով:
- Սպային վայել կոկիկ հագնված ու սափրված վիճակում հաճախել ուսումնական հաստատություն.
- Ուսումնական ծրագրերը ամբողջական կատարել և հաշվետու լինել միայն ուսումնական հաստատության տնօրենին.
- Խստորեն պահպանել և ամենօրյա կատարողակարգ սահմանել ՀՀԶՈՒ ներքին ծառայության կանոնակարգի էթիկայի վերաբերյալ սահմանված պահանջներին:
- Օրվա դասապրոցեսին մշտապես լինել պատրաստ

2. Զինվորական պատրաստության ղեկավարին խստիվ արգելվում է

- Ուսումնական հաստատությունում զբաղվել տնտեսական, շինարարական, բիզնես և նմանատիպ այլ գործունեությամբ:
- Ուսումնական հաստատությունում քաղաքական, հասարակական և աղանդավորական քարոզչությամբ զբաղվել:

3.Զինվորական կոչումի շնորհում. առաջարկում ենք՝

Տարածքային զինվորական կոմիսարի և ուսումնական հաստատության տնօրենի երաշխավորությամբ զինվորական պատրաստության ղեկավարին զինվորական հերթական կոչում շնորհել՝

- Կրտսեր սպայական կազմին՝ 5 տարին մեկ անգամ
- Ավագ սպայական կազմին՝ 7 տարին մեկ անգամ

Զիվորական ղեկավարին սպայի կոչում շնորհել մինչև գնդապետի կոչումը ներառյալ:

4.Զինվորական համազգեստի տրամադրում.

Հաշվի առնելով, որ ուսումնական հաստատությունում զիվորական ղեկավարին զինվորական համազգեստ կրելը պարտադիր պահանջ է, առաջարկում ենք՝

- 3 տարին մեկ անգամ զինվորական ղեկավարին տրամադրել զինվորական համազգեստ:
- Համազգեստի դրամական փոխհատուցումը դնել ուսումնական հաստատության վրա:
- Զինվորական ղեկավարին համազգեստ տրամադրել նախնական պատվերով:

5.Այն զինվորական ղեկավարը ով մասնակցել է 1990-94թթ., 2016 քառօրյա և 2020թ. քառասունչորսօրյա պատերազմներին (հիմք Պ.Ն արխիվ) ու մնացել է ստվերում, առաջարկում ենք՝

- 3 տարին մեկ անգամ պարգևատրել մեկ կառավարական պարգևով (մարտական ծառայության) մեդալով.
- 3 տարին մեկ անգամ պարգևատրել պաշտպանության նախարարության գերատեսչական մեդալով.
- Ուսումնական հաստատության փառքի սրահում լուսաբանել զինվորական ղեկավարի անցած մարտական ուղին.
- Զինվորական ղեկավարի պարգևատրման ներկայացման երաշխավորությունը դնել տարածքային զինվորկան կոմիսարի և ուսումնական հաստատության տնօրենի վրա:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ուսումնական հաստատություններում մատաղ սերնդի ռազմահայրենասիրության դաստիարակությունը ժամանակի պահանջներին հասցնելու համար առաջարկում ենք՝

1. Կազմակերպել այցելություններ.

- ՀՀ ՊՆ զորամասեր
- Եռաբլուր զինվորական պանթեոն, մարզերում տարածքային զինվորական պանթեոն:
- Հայոց ցեղասպանության հուշահամալիր՝ Ծիծեռնակաբերդ և հայոց ցեղասպանության թանգարան:
- Հայաստանի հանրապետության պատմաճարտարագիտական հուշահամալիրներ.

2. Ցուցադրել ռազմահայրենասիրական տեսաֆիլմեր՝ ՀՀՊՆ-ում մշակված.

- 1990-94թթ, 2016թ քառօրյա և 2020 քառասունչորսօրյա ազատամարտերի մասին փաստավավերագրական տեսաֆիլմեր.
- Հատվածներ ՀՀ ռազմական զորահանդեսներից.
- Ռազմահայրենասիրություն ոգեկոչող տեսաֆիլմեր:

3. Հայաստանի Հանրապետության պետական տոների օրերին.

- Կազմակերպել հանդիպումներ հայոց բանակի սպաների հետ
- Կազմակերպել հանդիպումներ 1990-94թթ, 2016թ. քառօրյա և 2020թ. քառասունչորսօրյա պատերազմների վետերանների հետ.
- Ցուցադրել տեսաֆիլմեր՝ տոնական օրվան համարժեք:

4. Ցուցադրել ուսուցողական տեսաֆիլմեր՝ ՀՀԶՈՒ զորատեսակներին համապատասխան:

5.Կազմակերպել ռազմահայրենասիրական տարաբնույթ միջոցառումներ:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱ

Զինվորական պատրաստություն առարկան պատշաճ մակարդակի դասավանդելու համար առաջարկում ենք՝

1.Զինվորական պատրաստություն առարկան արդյունավետ դասավանդելու համար հատկացնել առանձին դասասենյակ՝ կահավորված ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերում առկա զինվորի ուսումնական դասապրոցեսները թեմատիկ անցկացնելու դասասենյակի չափորոշիչներով:

2. Զինվորական պատրաստության դասասենյակի նախասրահը կահավորել որպես փառքի սրահ՝ կահավորման չափորոշիչները թողնել ուսումնական հաստատության մանկավարժական կոլեկտիվ նախասիրության վրա:

3. Բոլոր ուսումնական հաստատություններում կառուցել շարահրապարակ և մարզահրապարակ՝ պաշտպանության նախարարության կողմից մշակված չափորաշիչներով ու աջակցուցյամբ:

4. Ուսումնական հաստատությունների զինվորական պատրաստություն առարկայի սովորաղների թվաքանակի համապատասխան հատկացնել՝

- 1-3 օդամղիչ հրացան՝ ռուսական արտադրության
- 1-3 ուսումնական ինքնաձիգ՝ Կալաշնիկով
- 30-90 ուսումնական փամփուշտ՝ ինքնաձիգի
- 1-3 ուսումնական նռնականետեր
- 1-3 ուսումնական արկ՝ նռնականետի
- 1-3 ուսումնական նռնակ (РГД-5)հարձակողական
- 1-3 ուսումնական նռնակ (Ф-1)պաշտպանողական
- 1 ուսումնական հակատանկային ական
- 1-3 ուսումնական՝ հակատանկային նռնակ

5. Բոլոր ուսումնական հատատություններում հրաձգության նշանառության մարզումներ ու հրաձգություն կատարելու համար կառուցել հրաձգարաններ՝ հրաձգությունը օդամղիչ հրացանով:

6. Ուսումնական հաստատության զինվորական ղեկավարին հատկացնել առանձնասենյակ՝ իր իրավունքներն ու պարտականությունները և գործողությունները պատշաճ մակարդակի կազմակերպելու համար:

7. Բոլոր մարզկենտրոններում և Երևան քաղաքում կառուցել զենքերի վերանորոգման արհեստանոցներ՝ ուսումնական հաստատությունների ուսումնական զենքերի վերանորոգման համար:

ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ

ԲԵՌՆԱԹԱՓՈՒՄ

1.Միջազգային մարդասիրական իրավունքներ.

- Արցախյան 1990-94թթ, 2016թ. քառօրյա և 2020թ. քառասունչորսօրյա պատերազմների ընթացքում թուրք-ազերիական ասկարները հայ ռազմագերիների նկատմամբ կիրառել են մարդկային բոլոր սահմաններից դուրս գտնվող դաժանություններ ու հաճոյանալու նպատակով տեղադրում սոց. ցանցերում՝ հայ ազգին սարսափի մեջ պահելու նպատակով...
- Վերջին 30 տարվա ընթացքում բազմաթիվ մոլորված՝ իր կամքից անկախ Ադրբեջանի տարածք անցած հայ սահմանապահի և խաղաղ բնակչի նկատմամբ ազերի ասկյարները կիրառել են դաժանություններ ու շատերին կյանքից զրկել...

- Հիմք ընդունելով վերոգրյալը նպատակահարմար չենք գտնում զինվորական պատրաստություն առարկայի դասաժամերին միջազգային մարդասիրական իրավունքներ թեմա ուսուցանել՝ նպատակահարմար ենք գտնում միջազգային մարդասիրական իրավունքներ թեման ուսուցանել հասարակագիտության առարկայի ծրագրի շրջանակներում:

2.Առաջին բուժօգնություն.

Մասնակցել եմ 1990-94թթ. և 2016թ. Արցախյան պատերազմներին և վստահեցնում եմ, որ որևիցե ճակատամարտի ընթացքում ոչ մի վիրավոր զինվոր-ազատամարտիկի առաջին բուժօգնություն չի ցուցաբերվել, ինչի չէ նաև ես էլ վիրավորվել եմ մարտադաշտում 2 անգամ՝ ինձ էլ չի ցուցաբերվել բուժօգնություն, պարզապես եղել է աջառին օգնություն ու տեղափոխել մոտակա բուժկետ՝ առաջին բուժօգնություն ցուցաբերելու նպատակով...

Ճիշտ կլինի մենք մեզ չխաբենք՝ 8-9-րդ դասարաններում սովորող սաների համար անմատչելի է առաջին բուժօգնության ծրագրային թեմաները...

Հիմք ընդունելով վերոգրյալը առաջարկում ենք.

Պաշտպանության նախարարության բուժվարչության և կարմիր խաչի համապատասխան բաժիններում վերանայել առաջին բուժօգնության ծրագրային թեմաները ու համապատասխան թեմատիկ պլաններ մշակել առաջին օգնության թեմայով:

3. Ռազմարվեստի պատմություն.

1. Հաշվի առնելով, որ պատմության դասաժամի ծրագրի շրջանակում ներառված է նախնական զինվորական պատմություն ծրագրի շրջանակում ընդգրկված ռազմարվեստի պատմության ծրագրային թեմաները, առաջարկում ենք՝

- Զինվորական պատրաստության ծրագրի շրջանակում ընդգրկել 1-2 պատմական կարևոր նշանակություն ունեցող ճակատամարտեր՝ սովորողների շրջանակում ռազմահայրենասիրական ոգին բարձր մակարդակի պահելու համար...

4. Վերոգրյալ բոլոր բեռնաթափված դասաժամերը փոխանցել կրակային պատրաստություն և շարային պատրաստություն բաժիններին:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԾՐԱԳԻՐ

8-րդ դասարան.

1.ՀՀ Զինված ուժերի խնդիրներն ու կառուցվածքը -1ժամ

2.ՀՀ պետական խորհրդանիշներ

ՀՀ ԶՈՒ-ի խորհրդանիշներն ու զինվորական երդում -1ժամ

3. Հայ զինվորականի վարքականոնները -1ժամ

4. ՀՀ ԶՈՒ կանոնակարգերի գործառության ոլորտները, զինծառայողի իրավունքներն ու ընդհանուր պարտականությունները -1ժամ

5. ՀՀԶՈՒ-ի զինվորական կոչումները

Պետեր և ենթականեր -1ժամ

6.Հրաման և կարգադրություն:

Զինվորական ողջույն:

Զինվորական քաղաքավարության կանոներ -1ժամ

7. Ժամանակակից համազորային մարտի տեսակները.

Մոտոհրաձգային ջոկի ենթակարգը և մարտակարգը -1 ժամ

8. Մոտոհրաձգային ջոկի կազմը և մարտական հնարավորությունը -1 ժամ

9. Զինվորի գործողությունը մարտի ժամանակա -1ժամ

10. Կրակային պատրաստության խնդիրները.

Անվտանգության կանոնները -1ժամ

11. Ավտոմատ Կալաշնիկովի հիմնական տեսակները, մասերն ու մարտական հնարավորությունները -1ժամ

12. Ավտոմատ Կալաշնիկովի ոչ լրիվ քանդելն ու հավաքելը՝ գործնական -2ժամ

13. Նշանառության և հրաձգության մարզումներ՝ գործնական -2ժամ

14. Շարք: Շարքի տեսակները, նրա բաղկացուցիչ մասերը -1ժամ

15.Շարային վարժաձև, դարձումներ շարժման ժամանակ -1 ժամ

16.Շարային վարժաձևեր, դարձումներ տեղում և շարժման ժամանակ՝

գործնական -2ժամ

17.Տեղանքի տարատեսակները և մարտավարական հատկանիշները:

Կողմնացույց -1ժամ

18.Կողմնորոշում արեգակի, արեգակի և ժամացույցի, բևեռային աստղի

միջոցով -1ժամ

19. Հորիզոնի կողմերը տեղական առարկաների միջոցով -1ժամ

20. Արտակարգ իրավիճակներ.

Բնակչության պաշտպանության պետական միասնական համակարգ -1ժամ

21.Երկրաշարժ, սողանքներ, փլուզումներ -1ժամ

22. Սելավներ,, ջրհեղեղներ. բնական հրդեհներ -1ժամ

23. Օթերևութաբանական վտանգավոր երևույթներ. փոթորիկ, ձնաբուք, ձնհոսք, ամպրոպ -1ժամ

24.Առաջին օգնություն. -2ժամ

Գործնական պարապմունքներ.

1.Ավտոմատ Կալաշնիկով ոչ լրիվ քանդել և հավաքել -1ժամ

2.Նշանառության ու հրաձգության մարզումներ՝ օդամղիչ հրացան -2ժամ

3. Շարային վարժություններ, դարձումներ շարժման ընթացքում -1ժամ

4.Շարքից դուրս գալ և շարք վերադառնալ -1ժամ

5. Առաջին օգնություն -1ժամ

9-րդ դասարան.

1. Խոշաբի՝ Հայոց Զորի ճակատամարտ -1ժամ

2. Ավարայրի ճակատամարտ ՝ ճակատամարտ դեպի հարություն -1ժամ

3.Զինվորական երդում տալու կարգը -1ժամ

4.Զինվորական կարգապահության էությունը: Խրախուսանքներ:

Կարգապահական տույժեր -1ժամ

5.Զինվորական պատասխանի տեսակները -1ժամ

6.Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի, Իրանի զինված ուժերի կառուցվածքը և սպառազինությունը -1ժամ

7.Պայքար հակառակորդի տանկերի և զրահամեքենաների դեմ -1ժամ

8.Մոտոհրաձգային ջոկի սպառազինությունը և հնարավորությունները տանկերի և զրահամեքենաների դեմ պայքարելիս -1ժամ

9. Ավտոմատի հիմնական մասերի ու մեխանիզմների նշանակությունը -1ժամ

10.Ինքնաձիգերի ոչ լրիվ քանդելն ու հավաքելը՝ գործնական -2ժամ

11.Ավտոմատ և մենահատ հրաձգություն -1ժամ

12.Ավտոմատի մաքրումը, յուղումը և պահպանումը -1ժամ

13.Նշանառության ու հրաձգության մարզումներ՝ գործնական -2ժամ

14.Դարձումներ շարժման ժամանակ -1ժամ

15. Դարձումներ շարժման ժամանակ՝ գործնական -1ժամ

16.Շարքից դուրս գալ և շարք վերադառնալ -1ժամ

17. Շարքից դուրս գալ և շարք վերադառնալ ՝ գործնական -1ժամ

18.Զինվորական ողջույնի կատարումը գլխարկով և առանց գլխարկ -1ժամ

19.Զինվորական ողջույնի կատարումը գլխարկով և առանց գլխարկ՝

Գործնական -1ժամ

20.Մագնիսական ազիմուտ. Ազիմուտով շարժվելը -1ժամ

21.Տեղագրական քարտեզ -1ժամ

22. Հրդեհներ և պայթուններ -1ժամ

23.Վթարներ ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտանետումով -1ժամ

24.Վթարներ ռադիոակտիվ նյութերի արտանետումով -1ժամ

25. Վթարներ կենսապահովման կոմունալ համակարգում -1ժամ

26. Առաջին բուժօգնություն -2ժամ

Գործնական պարապմունքներ.

1.Ավտոմատ Կալաշնիկովի ոչ լրիվ քանդել ու հավաքել -1ժամ

2.Նշանառության ու հրաձգության մարզումներ՝ օդամղիչ հրացան -2ժամ

3. Շարային վարժանքներ: Դարձումներ տեղում և շարժման ընթացքում -1ժամ

4.Շարքից դուրս գալ և շարք վերադառնալ -1ժամ

5.Առաջին օգնություն -1ժամ

ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԻ

ԱՆՑԿԱՑՈՒՄ

1.Զինվորական պատրաստության ղեկավար

- Ուսումնական տարվա յուրաքանչյուրբ ամսվա առաջին չորեքշաբթի օրը անցնել շարային ստուգատես՝ տարածքային զինկոմիսարյատում
- Մինչև ուսումնական տարին սկսելը պատրաստել ուսումնական տարվա ծրագրերը, աշխատանքային պլանները ու դասապրոցեսներին վերաբերող հրամանները՝ հաստատված ուսումնական հաստատության տնօրենի կողմից:
- Մինչև ուսումնական դասաժամի սկսելը պատրաստել տվյալ դասաժամի պլանի հակիրճակը
- Ուսումնական տարվա առաջին դասաժամին ուսումնական դասարանը վերածել ուսումնական դասակի, մինչև 20 սովորողի առկայության դեպքում 2 ջոկ, 21 և ավելի սովորողի առկայության դեպքում 3 ջոկ
- Դասակի և ջոկի հրամանատարներ նշանակելիս համագործակցել դասղեկների հետ;

2.Ուսումնական հաստատության սովորող.

- Անձնական՝ գիտական ունակության սահմաններում պատրաստ լինել դասաժամին

- Ապահոված լինել նյութական բազայով՝ դասագիրք, պլան հակիրճակի տետր, գրենական պիտույքներ
- Աշակերտ-աշակերտուհուն վայել կոկիկ հագնված
- Պատանիները լինեն սափրված ու մազերը կոկիկ հարդարած
- Աղջիկները մազերրը հյուսած կամ հավաքած վիճակում

3. Դասաժամի անցկացում.

3.1. Նախնական մաս 3-5 րոպե

- Զանգը հնչելուց անմիջապես սովորողները ըստ ջոկերի, միաշարասյուն շարվում են իրենց հատկացված գրասեղանին զուգահեռ
  Դասակի՝ ջոկին հրամանատար.

Դասակ զգաստ, ապա թեքվելով դեպի զինվորական ղեկավարը՝ զեկուցում.

  - ✓ Պարոն մայոր 8ա դասակում ցուցակով 25 սովորող են, բոլորը տեղում են, կամ. Ցուցակով 25 սովորող են, 2 սովորող անհայտ պատճառով բացակայում են.
- Զինվորական ղեկավարը զեկույցից հետո դեմքով թեքվում է դեպի սովորողները
  -Ողջույն.
  Սովորողները.
  -Ողջույն պարոն մայոր:
- Զինվորական ղեկավարը ողջույնից հետո ստուգում է սովորողների առկայությունը, արտաքին տեսքը և նյութական ապահովածությունը՝ ապա.
  -Նստեք ձեր տեղերը:
  Դասակի՝ ջոկի հրամանատար.
  -Նստեք ձեր տեղերը ու ինքն է նստում իր տեղը:

3.2.Հիմնական մաս՝ 35 րոպե.

Դասաժամը սկսում է պետական օրհներգով՝ մեկ սյունակ.

- Ստուգվում է 4-5 սովորողի դասի պատրաստվածությունը՝ 20-25 րոպե
- Զինվորական պատրաստվածության ղեկավարը բացատրում է նոր դասը՝ 10-15 րոպե

3.3.Ամփոփիչ մաս՝ 5րոպե

- Զինվորական ղեկավարը սովորողների հետ համատեղ ամփոփում է նոր դասը և սովորողների անմատչելի հարցերին տալիս սպառիչ պատասխան:

3.4. Դասաժամի ավարտ.

Դասաժամի ավարտին՝ զանգը հնչելուց հետո զինվորական ղեկավարի թույլտվությամբ դասակի՝ ջոկի հրամանատարը մոտենում է գրատախտակին՝ դեմքով դեպի սովորողները.

-Դասակ ոտքի՛, զգա՛ստ.

Զինվորական ղեկավար.

-Ցտեսություն:

Սովորողներ.

-Ցտեսություն, պարո՞ն մայոր:

Զինվորական ղեկավար.

-Ըստ ջոկերի՝ աջից մեկ շարասյունով դուրս եկե՛ք դասարանից:

Դասակի՝ ջոկի հրամանատար.

- Ըստ ջոկերի՝ աջից մեկ շարասյունով դուրս եկե՛ք դասարանից:

ՍՈՎՈՐՈՂԻ ԴԱՍԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գործնական և թեմատիկ պատրաստվածություն.

-դասին պատրաստ է մինչև 30%- գնահատել անբավարար

- դասին պատրաստ է մինչև 31-50%- գնահատել 4-5 միավոր

- դասին պատրաստ է մինչև 51-70%- գնահատել 6-7 միավոր

- դասին պատրաստ է մինչև 71-90%- գնահատել 8-9 միավոր

- դասին պատրաստ է մինչև 91-100%- գնահատել 10 միավոր

Հրաձգություն՝ օդամղիչ հրացանով -5 կրակոց.

-մինչև 20 միավոր - գնահատել անբավարար

-20-24 միավոր - գնահատել 4 միավոր

-25-29 միավոր - գնահատել 5 միավոր

-30-34 միավոր - գնահատել 6 միավոր

-35-39 միավոր - գնահատել 7 միավոր

-40-44 միավոր - գնահատել 8 միավոր

-45-49 միավոր - գնահատել 9 միավոր

- 50 միավոր - գնահատել 10 միավոր

Այն սովորողը, ով ուսումնական հրաձգություն մարզումների ընթացքում հավաքում է 45- 50 (5 կրակոց) միավոր թույլատրել մասնակցություն ունենա համայնքային, մարզային ու հանրապետական մրցումներին:

ՕԼԻՄՊԻԱԴԱ: ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով, որ ՀՀ ուսումնական հաստատություններում օլիպիադաները, ռազմամարզական խաղերը և ուսումնական հրաձգությունը կազմակերպվում է թիմային մրցաշարերի համակարգով, համարում ենք անընդունելի:

Նպատակահարմար ենք գտնում վերոգրյալ ուժային մրցաշարերը անցկացնել՝

- Հիմնական դպրոցները առանձին
- Ավագ և միջնակարգ դպրոցները համատեղ:

Հիմք.

- Հիմնական դպրոցի 14-15 տարեկան դեռահաս աշակերտ-աշակերտուհին տարիքային պայմաններից ելնելով անհնար է ուժային մրցակցության մեջ մտնի ավագ կամ միջնակարգ դպրոցի 17-18 տարեկան պատանու կամ օրիորդ աշակերտ-աշակերտուհու հետ:
- Թիմային համակարգի դեպքում հիմք ընդունելով վերոգրյալը՝ հիմնական դպրոցները մնում են ստվերում, իսկ զինվորական պատրաստվածության ուսուցիչները հայտնվում են անհարմար իրավիճակում:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք՝

ՀՀ ուսումնական հաստատություններում օլիպիադաները, ռազմական խաղերը և ուսումնական հրաձգությունը անցկացնել՝

- Հիմնական դպրոցներում առանձին
- Ավագ և միջնակարգ դպրոցներում համատեղ

- Համայնքային և մարզային թիմային համակարգի փոխարեն ընդգրկել դպրոցական թիմային համակարգ:

Օրինակ.

- Համայնքային մրցաշարի դեպքում համայնքի բոլոր դպրոցները՝ հիմնական դպրոցները առանձին, իսկ ավագ և միջնակարգ դպրոցները համատեղ, յուրաքանչյուր դպրոցը իր թիմով մրցակցեն: Այնուհետ համայնքային թե՛ հիմնական և թե՛ ավագ ու միջնակարգ դպրոցների առաջին հորիզոնականը զբաղեցրած դպրոցները դուրս գան մարզային փուլ:
- Մարզային մրցաշարերի դեպքում բոլոր համայնքներում հաղթանակած և առաջին հորիզոնական զբաղեցրած դպրոցները՝ հիմնական դպրոցները առանձին, ավագ և միջնակարգ դպրոցները առանձին՝ իրենց դպրոցի թիմով մրցակցեն: Այնուհետ մարզային թե՛ հիմնական և թե՛ ավագ ու միջնակարգ դպրոցների առաջին հորիզոնականը զբաղեցրած դպրոցները դուրս գան հանրապետական փուլ:
- Հանրապետական մրցաշարերի դեպքում բոլոր մարզերում հաղթանակած և առաջին հորիզոնական զբաղեցրած դպրոցները՝ հիմնական դպրոցները առանձին, ավագ և միջնակարգ դպրոցները առանձին՝ իրենց դպրոցի թիմով մասնակցեն հանրապետական մրցաշարին: Այնուհետ հանրապետական թե՛ հիմնական և թե՛ ավագ ու միջնակարգ դպրոցներին, որոնք զբաղեցրել են առաջին, երկրորդ և երրորդ պատվավոր տեղերը տալ համարժեք խրախուսանք:
- Նպատակահարմար ենք գտնում այն աշակերտ-աշակերտուհին, ով մեկ կամ մի քանի մրցաձևում անհատապես զբաղեցրել է առաջին, երկրորդ կամ երրորդ պատվավոր հորիզոնականները, նրանց էլ տալ համարժեք խրախուսանքներ:

Ահա այստեղ ենք տեսնում արդյունավետ մրցակցություն: